Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՍՆ <<ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>>ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը հարցադրումների մեթոդով:

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Մարտունի

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բեյբության Հասմիկ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Թառոյան Ռիմա

ԴՊՐՈՑ՝ «Վարդենիկի կրթահամալիր»

Մարտունի 2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն.....3
2. Գրական ակնարկ.....5
3. Փորձարարական հետազոտություն.....10
4. Հետազոտվող խմբի նկարագիրը.....11
4.1 Փորձարարական դաս-1.....12
4.2 Փորձարարական դաս-2.....14
5. Վերլուծություն.....15
6. Գրականության ցանկ.....16
7. Հավելված.....17
7.1 Դասապլան-1.....17
7.2 Դասապլան-2.....20

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարի ուսուցիչը պետք է կարողանա ապահովել սովորողների վերլուծելու կարողությունը և սեփական դիրքորոշումը ունենալու հնտությունը:
Ուսուցիչը օրինակներ ներկայացնելու հետ մեկտեղ պետք է կարողանա արդյունավետ կառավարել ժամանակը, լինել համբերատար ու պատասխանել սովորողի բոլոր հարցերին, լսել ցանկացած մեկնաբանություն, հնարավորություն տա աշակերտին ձևավորել և արտահայտել իր կարծիքը: /Գիրք պատմության ուսուցման.Ինչու՞, Ինչպե՞ս/

Մայրենիի ուսումնառության կարևոր վերջնարդյունքներից մեկն էլ ժամանակի զգացողությունն է, և սա էլ դառնում է բարդություններից մեկը, որ աշակերտը հաճախ չի ընկալում հյուրը, ուստի պետք է օգնել աշակերտին ստեղծագործություններին նայել այնպես, ինչպես հեղինակներն են նայել,այնուհետև վերլուծել և համեմատության մեջ գտնել ճշմարտությունը:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պետական կրթական քաղաքականության շրջանակներում առաջնահերթ է դարձել կրթության որակի բարելավմանն ուղղված՝ հանրակրթության բովանդակությունը, ուսուցման բարձր արդյունքներ ապահովող պետական չափորոշիչը, միջնակարգ կրթության յուրաքանչյուր աստիճանի առարկայացանկը, դրանց դասաբանային և լրացուցիչ պարապմունքների շաբաթական ժամաքանակները, առարկայական համալիր ծրագրերի ստեղծման սկզբունքները, կառուցվածքը, ուսուցման արդյունքների գնահատման և մշտադիտարկման համակարգը և կրթական միջավայրի հիմնական պայմանները սահմանող մեկ միասնական շրջանակային փաստաթղթի՝ Ազգային կրթակարգի (National Curriculum) ընդունումը:

Ազգային կրթակարգը հանրակրթության բովանդակությունը սահմանող և դրա ներդրմանն ու իրականացմանը միտված նորմատիվ իրավական փաստաթուղթ է:

1. Ազգային կրթակարգը (այսուհետ՝ Կրթակարգ) ներկայացնում է տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ընդհանուր ծրագրերի շրջանավարտներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, սովորողների ուսումնական
բեռնվածության ծավալը, գնահատման համակարգը, կրթական միջավայրին և ռեսուրսներին վերաբերող նոր պահանջները:

2. Կրթակարգի նորմերն ու դրույթները պարտադիր են Հայաստանի Հանրապետության կրթության կառավարման մարմինների, տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր, հատուկ և մասնագիտացված հանրակրթական ծրագրեր (այսուհետ՝ հանրակրթական ծրագրեր) մշակողների և այդ ծրագրերն իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ու սեփականության ձևերից և ենթակայությունից:

3. Կրթակարգի գլխավոր նպատակը որակյալ կրթության ապահովումն է

Միջնակարգ կրթության տարրական աստիճանի աշակերտի պատրաստվածությանը ներկայացվող ընդհանրական ծրագրային պահանջների կատարման արդյունքում ակնկալվում է, որ միջնակարգ (ավագ) դպրոցի սովորողը պետք է ունենա ազգային և քաղաքացիական գիտակցություն, դրսևորի արժանապատիվ, հարգալից և մարդասիրական վարքագիծ ուսումնական գործունեության ընթացքում, ընտանիքում և իր առօրյա կյանքի մյուս ոլորտներում:
Տարրական դասարանում սովորողը պետք է կարողանա ազատ ու անկաշկանդ արտահայտել սեփական կարծիքը, ունենա իր գործունեությունը պլանավորելու հնտություն:

Մայրենի ուսուցիչը պետք է կարողանա իր առջև գլխավոր նպատակ դնել՝ ի՞նչ անել, որ աշակերտը սեփական փորձով հասկանա, թե ինչպես է ստեղծվում գրական ցանկացած երկ, կարողանա բնութագրել նյութի բովանդակությունը, նշի պատճառներն ու հետևանքները:

Հասկանա՝ ինչպես է կարևորվում իրադարձությունը և ի՞նչ հարցեր են ծնվում նյութը ուսումնասիրելիս:

2. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Կրթությունը ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար: /Նելսոն Մանդելա/

Անձնային արժեքների խնդիրը քննարկվել է տարբեր գիտակարգերի շրջանակներում և տրվել դրանց բազմաթիվ սահմանումներ: «Անձնային արժեք» հասկացությունը կիրառվում է տարբեր նշանակություններով: Սակայն միասնական կարծիք այս հասկացության սահմանման վերաբերյալ գոյություն չունի: Գրականության մեջ առանձնացնում են «արժեք» հասկացության առավել քան հարյուր սահմանումներ, որոնցում առաջարկվում են տվյալ խնդրի դիտարկման տարբեր մոտեցումներ և կողմեր: Մեր առջև նպատակ ենք դրել խմբավորել տարբեր տեսություններում անձի արժեքների վերաբերյալ ներկայացվող տեսակետները, ինչը հնարավորություն կտա բացահայտելու արժեքների ձևավորման հիմնական օրինաչափությունները: Մասնագիտական գրականության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր հասարակություն, սոցիալական խումբ, հասարակական խմբավորում ստեղծում է իրեն հատուկ ընդհանուր և յուրահատուկ

արժեքային համակարգեր և վարքականոններ, որոնք արտահայտում են նրանցում գերակայող հետաքրքրությունները և նպատակները: Այդ հասարակությանը պատկանող մարդը ընդունում է դրանք որպես իր վարքի չափանիշ: Անձնային արժեքը մարդու մասին գիտությունների՝ փիլիսոփայության, հոգեբանության, մանկավարժության, սոցիոլոգիայի և այլ գիտությունների
կարևոր խնդիրներից մեկն է: Չնայած որ արժեքների հոգեբանական սահմանումների մեծամասնությունը հիմնվում են արժեքների և արժեքային կողմնորոշումների փիլիսոփայական և սոցիոլոգիական հայեցակարգերի վրա, անձնային արժեքների հոգեբանական հասկացումը էապես տարբերվում է այլ գիտություններում արժեքների մեկնաբանությունից:/ Նանե Զեյնալյան/

Վերջին երկու տասնամյակում հայ իրականության մեջ արժեքների փոխակերպումները շարունակական բնույթ են կրում: Այս գործընթացը մեծապես պայմանավորված է տարբեր ուղղորդում ունեցող տեղեկատվական հոսքերով, տեղեկատվադաշտի առևտրայնացմամբ ուղեկցված իրողություններով, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ, համաշխարհային տեղեկատվական միջավայրի ձևավորմամբ: Վերջիններիս գործունեության հիմնական տարածքն ու միջոցը ԶԼՄ-ներն են, և առաջին հերթին՝ էլեկտրոնային ԶԼՄ-ները (հատկապես նոր մեդիան և հեռուստատեսությունը): Ուստի վերջիններիս ուսումնասիրությունը և հանրային գիտակցության վրա դրանցից յուրաքանչյուրի ազդեցության չափաբաժնի ճշտումը թույլ կտա հստակեցնել հայ հասարակության գերակա արժեքների ձևավորման և փոխակերպումների ընթացքն ու ներքին շարժառիթները: Հանրային արժեքների հանդեպ ուշադրությունը հատկապես կարևոր է Հայաստանի նման հակամարտությունների մեջ ներքաշված, արտագաղթի մեծ տեմպեր ունեցող պետության համար: Համաշխարհայնացման գործընթացը մեծ ազդեցություն ունի հայի արժեհամակարգի ձևափոխումների վրա: Նորագույն տեխնոլոգիաների զարգացմամբ տեղեկատվությունը դարձել է խիստ շարժուն, ինչը նույնքան շարժուն է դարձրել մշակութային ներթափանցումները: Դրանք հիմնականում իրականացվում են համացանցի միջոցով տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար Արևմուտքից, իսկ այս ամենի արտացոլումը պարզորոշ երևում է հեռուստաէկրանից. պետական այրերը և պարզապես քաղաքացիները ՀՀ կենսագործունեության ցանկացած բնագավառում իրենց քայլերի իրավացիությունն ապացուցելու համար ներկայացնում են դրանց առնչություններն ու զուգահեռները արևմտյան համապատասխան համակարգերի հետ, ինչը վերածվում է արևմտյան արժեքների գովազդի, ձևավորում կարծիք դրանց միանշանակ ճշմարտացի լինելու մասին, որոշակի անվստահություն առաջացնում սեփական արժեքների, ազգային ներուժի հանդեպ: Արժեքային այս փոխակերպումները, որոշ իմաստով, նպաստում են արտագաղթի ծավալների մեծացմանը: Անգլերեն լեզվի քարոզչությունը համացանցում, մասամբ նաև հեռուստաէկրանից փոխեց այս լեզվի հանդեպ արժեքային պատկերացումները, ինչը հանգեցրեց սոցիալական վարքի
որոշակի դրսևորումների. մի կողմից՝ սկսեցինք համատարած անգլերեն սովորել, մյուս կողմից՝ ձևավորվեց անգլերենի անփոխարինելիության պատկերացում. այսօր ՀՀ պետական բուհեր տարեկան ավարտում են մոտավորապես 5 անգամ ավելի օտար լեզուների, քան հայոց լեզվի մասնագետներ: Դիմորդների թվի համեմատության դեպքում տարբերությունը վստահաբար շատ ավելի մեծ կլինի: Հայ-թուրքական և հայ-ադրբեջանական տեղեկատվական հարաբերությունները բնորոշվում են Թուրքիայի և Ադրբեջանի հարձակողական քաղաքականությամբ:

Այս պետությունների հովանավորությամբ գործում են կառույցներ, որոնք միտված են հայության գերակա արժեքների նսեմացմանը. նրանք ջանք չեն խնայում վարկաբեկելու հայոց բանակը, մեզանում ձևավորելու անպաշտպանության, ՀՀ հանդեպ արհամարհանքի զգացողություն, լարվածություն առաջացնելու ներքաղաքական դաշտում:

Այս նպատակներին մեծապես ծառայեցնելով նոր մեդիայի հնարավորությունները՝ ստեղծում են ռուսալեզու, անգամ հայալեզու կայքեր, ակտիվ գործունեություն ծավալում սոցիալական ցանցերում: Տեղեկատվադաշտի առևտրայնացումն, իր հերթին, թելադրեց արժեհամակարգի ձևավորման սեփական կանոնները: Մերօրյա ԶԼՄ-ները, ցավոք, դաստիարակչական գործառույթը համարում են ոչ շահութաբեր՝ առաջնային տեղ հատկացնելով ժամանցայինին: Այս ճանապարհին ետին պլան են մղվում ազգային, պետական, մշակութային, քաղաքակրթական արժեքները, ինչը դառնում է հանրության արժեհամակարգի ձևախեղման պատճառ: Մեդիասպառողը չի սիրում, երբ իրեն սովորեցնում են, և պարզունակ մատուցման դեպքում արժեքներն իրոք չեն գտնի իրենց հասցեատերերին: Փոխարենը, ժարգոնային խոսք և

խաթարված արժեքներ ներկայացնող զվարճալի հաղորդումներն ու հեռուստասերիալները, սեռական, կրոնական և հոգեբանական շեղումներ քարոզող կայքերը, սոցիալական ցանցերում առկա հաճախ վտանգավոր ուղղորդումները, բոնությունն գովազդող համակարգչային խաղերը գտնում են իրենց սպառողին: Եվ ամենից հաճախ այդ սպառողը դեռահասն է, ով չունի կայացած արժեհամակարգ, սոցիալական վարքի կարգավորման մեխանիզմներ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին: Դեռահասության տարիքում (մասնագետների մեծամասնության կարծիքով՝ 12-16 տարեկան) է ձևավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և, առհասարակ, առաջնային արժեքների համակարգը: Այս շրջանում անչափահասը սկսում է ակտիվորեն վերաիմաստավորել իր նախկին մոտեցումները, փորձում է դուրս գալ ավագների ազդեցության ոլորտից, նրա համար ավելի կարևոր է դառնում շրջապատի կարծիքը, փորձում է հարմարվել նրանց կողմից ընդունելի նորմերին և հաստատվել տարեկիցների միջավայրում: Իսկ դեռահասը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է այսօր արդեն նրան ներարկել առողջ արժեքներ, ապագայի հասարակության համար պատրաստել հայրենասեր, քաղաքակիրթ քաղաքացիներ:

Այս գործը մասամբ իրենց վրա պետք է վերցնեն ընտանիքը, դպրոցը և ԶԼՄ-ները : Մասնագետների պնդմամբ, հեռուստատեսությունը դեռահասի վրա ներազդման ուժով 3-րդ տեղում է ընտանիքից և դպրոցից հետո: Մինչդեռ հայաստանյան հեռուստա և ռադիո եթերներից հաճախ հնչող ոչ ճիշտ հայերենը, ցածրաճաշակ երաժշտությունը, բռնության տեսարաններ, խաթարված մտածելակերպ ու շարժուձև պարունակող հեռուստահաղորդումներն ու ֆիլմերը, սոցիալական կայքերում հակասոցիալական, հակապետական ու հակազգային արժեքներ քարոզող «ընկերները» յուրօրինակ բռնություն են դեռահասի արժեքների հանդեպ: /Անահիտ Մեհեմշյան, Զարուհի Սարգսյան, Վարդուհի Ստեփանյան/

Այս խնդիրների լուծումը առաջնային է հատկապես մայրենիի դասաժամերի միջոցով տարրական դպրոցում:Տարրական դպրոցի ուսուցիչը գրեթե ամեն դասին առնչվում են սովորողների արժեքների ձևավորմանը, և, կամա թե ակամա դառնում են այդ արժեքները ամրապնդող: Որպեսզի մենք ունենանք ճիշտ դիրքորոշում ունեցող և լավագույն արժեքներով օժտված սերունդ պետք է կիրառենք մի շարք մեթոդներ և հնարներ:

ՈՒսուցման ընթացքում տարբեր մեթոդներ կիրառելիս օգտագործվում են հարցեր և հարցադրումներ, որոնք նպատակ ունեն պարզելու սովորողների գիտելիքների ընդհանուր մակարդակը, ապահովելու մտքերի ու գաղափարների ընկալում, խթանելու նրանց ակտիվությունն և ներգրավվածությունը ուսուցման գործընթացում: Հարցերը կամ հարցադրումները աշակերտների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու, համակարգելու, ստեղծագործական և քննադատական մտածողությունը զարգացնելու կարևոր գործոն են:

Ուսուցման ընթացքում կարևոր է ոչ միայն հարցերը ճշգրիտ ներկայացնելը, այլ նաև դրանց տրամաբանական հերթականությունն ապահովելը, որի բացակայությունը կարող է աշակերտներին շեղել մատուցվող նյութից կամ դասի նպատակից:

Հարցերը պետք է լինեն՝

ա/ հստակ

բ/ նպատակաուղղված

գ/ հակիրճ

դ/ տեղին

ե/ աշակերտների մակարդակին համապատասխան

զ/ տրամաբանական հաջորդականությամբ է/ մտածելու տեղիք տվող

Հարցերի և հարցադրումների վերջնական նպատակը աշակերտներից պատասխան և արձագանք ակնկալելն է և ուսուցանվող նյութի ընկալումն ապահովելն է: Ուսուցման ընթացքում տարբեր տեսակի հարցերն ու հարցադրումներն հիմնականում օգտագործվում են հետևյալ նպատակներին հասնելու համար:

Հարցերը բաժանվում են երկու հիմնական մասերի:

Հարցերի յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունը և կարևոր դեր ունի դասավանդման ընթացքում:

Այսպես՝

1.Վարժեցնող – մարզող հարցեր – նպատակ ունեն ընդլայնելու նյութի ընկալման և ըմբռման շրջանակները: Վարժեցնող հարցերը՝
. Առաջացնում են հետաքրքրություն:Տեղին և ժամանակին տրված հարցերը կարող են փոխել ստացվող տեղեկատվության արագությունն ու ուղղվածությունը և խթանել աշակերտների ակտիվությունը:
.Խթանում են ուսուցման գործընթացում աշակերտների ներգրավումը
.Խրախուսում են մտածողությունը,սովորողները սկսում են խորհել պատասխանի մասին

2.Ստուգող հարցեր – նպատակ ունեն վերահսկելու և գնահատելու նյութի ըմբռման մակարդակը: Ստուգման նպատակ ունեցող հարցերը կիրառվում են հետևյալ նպատակներին հասնելու համար
. Աշակերտների կողմից նյութի ընկալման մակարդակը որոշելու համար: ՈՒսուցիչը ստուգող հարցերի միջոցով փորձում է պարզել, թե արդյո՞ք աշակերտներն ըմբռնել են, թե ինչի մասին է խոսքը:
.Եթե ինչ որ բան չի հասկացվել, ապա հետագա հարցերը կարող են ընդլայնել այն տիրույթը, որտեղ աշակերտին օգնելու կարիք կա: Եթե ելակետային թեման վերածվել է քննարկման, ճիշտ կառուցված հարցը կարող է աշակերտներին վերադարձնել դեպի դիտարկվող նյութի հունը:
.Կձևավորի հարցեր տալու հմտություն:

Հարցերի տեսակները մանկավարժական գրականության մեջ դասակարգվուն են հետևյալ կերպ.

1. Բաց
2. Փակ
3. Հուշող
4. Ենթատեքստով
5. Հետադարձ
6. Ուղղորդող

Բաց հարցեր
Բաց հարցերը նպատակահարմար են անմիջական հաղորդակցություն սկսելու համար: Այս տիպի հարցերը հնարավորություն են տալիս ազատ պատասխանելու և սովորաբար սկսվում են <<ի՞նչ>>,<<ինչպե՞ս>>հարցերով:Այս հարցերը չեն ենթադրում միանշանակ պատասխան:
Փակ հարցեր
Փակ անվանում են այն հարցերը, որոնք պահանջում են միանշանակ պատասխան, պարզապես <<Այո>>կամ <<Ոչ>>: Վերջինները սահմանափակում են սովորողների մասնակցության աստիճանը և հարցաքննության բնույթ ունեն: Դրանք նաև որոշ չափով սահմանափակում են սովորողների ստեղծագործական մոտեցումը, սեփական կարծիքը հայտնելու կարողությանը:

Հուշող հարցեր

Հուշող հարցերը ,ինչպես երևում է անվանումից, այն հարցերն են, որոնք նպատակ ունեն աշակերտներին հանգեցնելու այն պատասխանին, որն ակնկալում է ուսուցիչը:Այս տեսակի հարցերը նաև խանգարում են աշակերտներին: Սակայն այս

դեպքում աշակերտները իրենց ավելի պաշտպանված են զգում:Հուշող հարցերի օրինակներ են՝ <<Դուք չե՞ք գտնում, որ այս թեման կարող է ձեզ համար օգտակար լինել>>, <<Միթե՞ դուք կարծում եք, որ այս մոտեցումը ճիշտ է>>:

Ենթատեքստով հարցեր

Այս տեսակի հարցերն օգտագործվում են աշակերտների լարվածությունը թուլացնելու և ակնկալվող պատասխանին հասնելու նպատակով:Այդպիսի հարցերից են օրինակ՝դուք համաձա՞յն եք, որ այս մեկը ավելի լավն է, քան մյուսը, կամ դուք հավանաբար կսխալվեք եթե ընտրեք այն երրորդին:

Հետադարձ կապն ապահովող հարցեր

Հետադարձ հարցերն օգտագործվում են, որպեսզի ճշտվի նյութի ընկալումը, և աշակերտների գրույցի մեջ ընդգրկված լինելը, նրանց պատասխանները զարգացնելու, կամ հետագա քննարկումը խրախուսելու և շարունակելու համար: Օրինակ՝<<Դուք ասացիք, որ առանց դաշնակցի հնարավոր չէ՞ր լուծել այդ խնդիրը>>:

Ուղղորդող հարցեր

Ուղղորդող հարցերն օգնում են աշակերտներին կենտրոնանալու միջոցով ուշադրությունը սևեռել դիտարկվող նյութի վրա: Մասնավորապես այն նպատակահարմար է օգտագործել նոր թեմային անցնելուց առաջ անցած նյութը ամփոփելու համար: Կարևոր է նաև, թե աշակերտներին ուղղորդելու նպատակով հարցերը երբ և որ պահին են տրվում: Օրինակ՝ <<Ինչպես կվարվեի՞ք դուք այդ իրավիճակում>>:

Եվ նմանատիպ հարցադրումներով ուսուցիչը կարողանում է թուլացնել լարվածությունը, հնարավորություն տալով սովորողին ազատ մտածել: / Մեթոդական ձեռնարկ

3. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Ի տարբերություն այն դասերի, որոնց այցելում են ստուգման կամ մանկավարժի աշխատանքում նոր փորձի տարբեր փնտրելու նպատակով՝ փորձարարական դասերը ուսուցիչներին առաջարկվում են նոր մեթոդիկա: Համապատասխանաբար, ուսումնական պրոցեսի մյուս կողմերը չեն դառնում ուսումնասիրման առարկա: Դիտարկվող դասը որոշակի է դարձնում նորի և պրակտիկայում լայն կիրառում գտած ուսուցման միջոցների համապատասխանելիությունը, նրանց գործառութային փոփոխություններ ներմուծվող նորի հետ համապատասխանեցված: Ուսումնասիրում է ներկայացվող նորույթի առաջընթացի հնարավորությունը ուսուցման ժամանակի և ուժի նվազագույն կորստի նպատակով, նրա արդյունավետությունը կայանում է սովորողների կարողությունների, հմտությունների և գիտելիքների համակարգի զարգացման վրա դրական ազդեցությամբ:

Փորձարարական դասի դիտարկմանը այցելած մանկավարժը պետք է պատասխանի հետևյալ հարցերին՝

- ✔ կարո՞ղ է արդյոք ներկայացվող նորույթը նա կիրառել իր փորձի ժամանակ,
- ✔ որո՞նք են նրա կիրառման սահմանները,
- ✔ հնարավո՞ր է արդյոք նրա կիրառումը հանգեցնի բացասական հետևանքների,
- ✔ ինչպիսի՞ տեղեկատվական լրացուցիչ աղբյուրներ պետք է ուսումնասիրել իր աշխատանքում կիրառելու համար և այլն:
- ✔ Փորձարարական դասին այցելող մանկավարժը իր կոլեգայի փորձը ուսումնասիրում է իր փորձի տեսանկյունից, հետևաբար, ինքնաբերաբար նա միաժամանակ իր գործունեությունն է ենթարկում գնահատականի:

Դասի արդյունքում պետք է արտացոլվեն հետևյալ հարցերի պատասխանները՝

- ✔ հասե՞լ է նա դասի մեթոդական նպատակին,
- ✔ իրագործե՞լ է ուսումնադաստիարակչական գործընթացին վերաբերող խնդիրները:

4. ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Որպես հետազոտման խնդրահարույց թեմա ընտրվել է 4- րդ դասարանի մի քանի աշակերտների առաջադիմության, պասիվության հետ կապված հարցերը: Այդ դասարանում սովորում են 18 աշակերտ՝ 8 աղջիկ,

10 տղա: Աշակերտների մի մասը բավականին ակտիվ է՝ աշխույժ:Նրանք կարողանում են պատմել,պատասխանել հարցերին, որոշ չափով վերլուծել,սակայն մյուս մասը պասիվ է: Մասամբ են մասնակցում դասերին,աշխույժ չեն, չեն կարողանում վերլուծել: Սովորողների մեծ մասը կարողանում է դասը պատմել,պատասխանել հարցերին, մյուս մասը կատարում է աշխատանքներ, սակայն մայրենիի դասը առանց կարծիքներ արտահայտելու,առանց իրենց դիրքորոշումը պարզաբանելու, հետաքրքիր և արդյունավետ կազմակերպել չի լինի: Ուսումնասիրվող դասարանում Մայրենի առարկան դասավանդվում է շաբաթական 9 ժամ ժամաքանակով: Մայրենի առարկան ուսումնասիրում են ամեն օր:

Անհրաժեշտ եմ համարում բոլոր սովորողների ներգրավվածությունը դասապրոցեսին:Իրավիճակը ցույց է տալիս, որ այն հետազոտման կարիք ունի, և եթե ցուցաբերվի ճիշտ և նպատակային մոտեցում, ապա հնարավոր կլինի կարճ ժամանակահատվածում հասնել էական առաջընթացի: Երեխաներից յուրաքանչյուրի խնդիրը անհատական է, ուստի նպատակահարմար է, որ դիտարկվեն որպես առանձին դեպքեր: Սովորողների մոտ կզարգացնենք ընկալումները,եթե դասապրոցեսը կազմակերպենք ճիշտ, կիրառելով անհրաժեշտ մեթոդներ և հնարավորինս <<բաց>>առաջադրանքներ և հարցեր:

4.1 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1

Դասի հենց սկզբից սովորողների համար պետք է պարզ լինի, թե ի՞նչ նոր բան են սովորելու տվյալ դասաժամին,ի՞նչ նոր բան են կարողանալու անել և իմանալ դասի վերջում: Դասի վերջնարդյունքը կլինի բավարարված,հագեցած գիտելիքներով և կարողություններով:Կբարձրանա սովորողների ինքնավստահությունը, նաև ձեռք բերված հմտությունները համադրելու լուրջ կարողություն ձեռք կբերեն:Առաջինը ընտրվել է այն դասը, որը ձևակերպվում է որպես նոր նյութի ուսումնասիրություն: Աշակերտներին հանձնարարվել է ծանոթանալ «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները» ստեղծագործությունը, որը բաղկացած է մի քանի ենթավերնագրերից:

Աշխատանքի նկարագրություն համար նպատակահարմար է ներկայացնել դասը՝ (պլանը հավելվածում), դրա ընթացքը, խնդրահարույց հարցերը և լուծման հնարավորություններն ու ուղիները: Մինչև դասը սկսելը ձևակերպվում է դասի առանցքային հարցերը: Կարևոր է, որ հարցերը բարդ չլինեն, որպեսզի աշակերտները կարողանան դրանք լուծել և խոչընդոտներից չհուսահատվեն: Առաջին դասի թեման էր՝ «Հովհաննես Թումանյանի արձանի մոտ>>:

Դասը սովորողներին կօգնի վերհիշել Թումանյանի՝ իրենց ծանոթ ստեղծագործություններից հատվածներ, դրանց հերոսներին և նրանց վարքագիծը,հերոսների ուժեղ և թույլ կողմերը: Այն կօգնի աշակերտներին հասկանալու և կյանքում ուժեղ լինելու՝ճակատագրի նախապատրաստած փորձություններին պատվով դիմագրավելու , չհուսահատվելու ու չնահանջելու համար:

Դասի սկզբում հնչում են հետևյալ հարցերը՝

- ✔ Ո՞վ է Հովհաննես Թումանյանը,ինչ գիտեք նրա մասին:
- ✔ Թումանյանի ո՞ր ստեղծագործություններն են ձեզ ծանոթ:
- ✔ Ի՞նչ հեքիաթներ են ծնողներդ պատմել քեզ համար:
- ✔ Ո՞րն է դրանցից առավել տպավորվել քեզ մոտ և ի՞նչ է սովորեցրել քեզ:
- ✔ Ի՞նչ նոր բան իմացար մեծն Թումանյանի մասին:

Աշակերտները որպես քննարկման հարց վերցրել էին, թե ո՞րն է իրենց սիրելի թումանյանական հեքիաթի հերոսը և ինչու՞:

Նյութի բովանդակությունը սովորողներին հասցնելու , նրանց գործուն մասնակցությունը գիտելիքի ձեռքբերմանը ապահովելու և դասն արդյունավետ վարելու համար ուսուցման գործընթացում կիրառվելու են հետևյալ դիդակտիկ նյութերը՝ դասագիրք, տետրեր, պաստառ, մարկերներ, գորնավոր գրիչներ և այլ իրեր:

Դասարան մտնելուց հետո ուսուցիչը ունի մեկ ամենակարևոր քայլ՝ կոտրել սառույցը սովորողների և սովորեցնողի միջև: Այդ նպատակով նա սկսում է կարճ հարցերի միջոցով և խթանել նրանց հետաքրքրությունը, և ծանոթացնել դասի կառուցվածքին:

Օրինակ հնչում են հետևյալ հարցերը.

- ✔ Տեսնենք ով՞ կհիշի և կներկայացնի, թե ինչ ենք սովորել անցած դասին և որն է մեր այսօրվա դասը:

Աշակերտներին ակտիվացնելուց հետո հնչում է հարց.

- ✔ Ո՞վ է կատարել տնային առաջադրանքները:
- ✔ Ի՞նչ հարցեր են առաջացել:

Եթե հարցեր չունեն տնային առաջադրանքները կներկայացնեն դասը պատասխանելու ընթացքում: Տնային հանձնարարությունները ստուգվում են ընթացիկ հարցերի միջոցով: Աշակերտները շահագրգռվածությամբ սկսում են վերհիշել նախորդ օրվա իրենց յուրացրած նյութը, մեկը մյուսին լրացնելով ներկայացնում են նյութը:

Աշակերտներին հետաքրքիր է դառնում դասի սպասվելիք բացահայտումները:

Աշակերտները բացում են իրենց տետրերը և պատրաստվում դասին: Կրկնում են դասը:

Ուսուցիչը մոտենում է գրատախտակին և կիրառում <<մտագրոհ>> մեթոդը, որի միջոցով թույլ է տալիս արտահայտվել բոլոր աշակերտներին: <<Մտագրոհի >> միջոցով կարողանում է ապահովել բոլոր սովորողների ներգրավվածությունը, հասկանալ թեմայի յուրացման մակարդակը:Այնուհետև հրահանգում է աշակերտներին մտածել մեկ հետաքրքիր դրվագ իրենց արտահայտած մտքի շուրջ:

Այնուհետև ուսուցիչը ԽԻԿ համակարգի միջոցով ուղղորդում է սովորողներին :

Այս փուլում նրանք ներկայացնում են նյութը,որի ընթացքում հնչում են հարցեր՝ ներգրավելով մյուս սովորողներին նյութի քննարկման մեջ:

Ուսուցիչը խթանում է, հիշեցնում է, հարցեր է տալիս:

Աշակերտները մեկը մյուսին արագ հաջորդելով ասում են իրենց սովորած և յուրացրած թեմային վերաբերվող մեկ կարևոր իրադարձություն,որի մասին սկսում են մտածել ինչ որ հետաքրքիր դրվագ:Հանձնարարում է յուրաքանչյուրին նկարել իր սիրելի թումանյանական հերոսը : Մոտիվացվում են, աշխուժանում,սկսում են նկարել, այնուհետև քննարկել:

Իմաստի ընկալման փուլում ուսուցիչը ապահովում է՝

- Սովորողների հետաքրքրության պահպանումը:
- Տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը,ստուգիչ հարցերի միջոցով:
- Նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:Ուսուցիչը սահուն կերպով ներկայացնում է նոր դասը
- Հաղորդում է հիմնական տեղեկատվությունը նոր դասի վերաբերյալ բերում օրինակներ:

Կշռադատման փուլում ուսուցիչը հնարավորություն է տալիս աշակերտներին արժևորել,օգտագործել,կրկնել իրենց սովորածն ու յուրացրածը:ՈՒսուցիչը լուծում է իր առջև դրված խնդիրը՝ ճիշտ օգտագործել սովորողների ուժերը և հնարավորություն տալ նրանց կիրառելու ստացած գիտելիքները:

Ամփոփելով առաջին հետազոտական դասը կարելի է ճշել, որ այն հաջողված էր, թիրախային խմբի աշակերտները կարողացան որոշ չափով վերլուծել խորքային հարցերը դրանց հանգուցալուծումը գտնել: Աշակերտները կարողացան արտահայտել իրենց դիրքորոշումը թեմայի շուրջ: Ուսուցիչը իր մոտ նշումներ արեց, վեր հանեց դասի դրական և բացասական կողմերը:Դասը հետաքրքիր էր,ժամանակի առումով կային որոշակի սահմանափակումներ: Աշակերտները ոգևորված արտահայտվում էին, համեմատում և վերլուծում:

4.2 ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2

Երկրորդ դասի թեման <<Արամ Խաչատրյանի հետ>> հատվածն է, հաջորդ մեր նշանավոր հայի մասին, ով իր կյանքով ու գործունեությամբ օրինակելի է մեր սերունդների համար:Աշխատանքի նկարագրություն համար նպատակահարմար է ներկայացնել դասը՝ (պլանը հավելվածում), դրա ընթացքը, պրոբլեմային հարցերը և լուծման հնարավորությունները ու ուղիները: Սկզբում երեխաները վերհիշում են նախորդ դասի առանցքային խնդիրները:

Այսօրվա դասի նպատակն է ծանոթացնել աշակերտներին Արամ Խաչատրյանի կյանքի կարևոր դրվագներին:Հասկանան ՝ ուր ուղևորվեց Հայկը և ինչու,կարողանան նկարագրել այս մեծ հայի կյանքի տարբեր տարիները,ներկայացնեն,թե որն է լավ երաժշտությունը՝ ըստ Արամ Խաչատրյանի և այլն:

Դասի սկզբում առաջանում են հարցեր՝

- ✔ ի՞նչ նոր բան են սովորելու տվյալ դասաժամին,
- ✔ ի՞նչ նոր բան են կարողանալու անել և իմանալ դասի վերջում:

Դասի վերջնարդյունքը կլինի բավարարված, հագեցած գիտելիքներով և կարողություններով:Կբարձրանա սովորողների ինքնավստահությունը, նաև ձեռք բերված հմտությունները համադրելու լուրջ կարողություն ձեռք կբերեն:

Դասը սկսում է կարճ հարցերի միջոցով և խթանելով նրանց հետաքրքրությունը, և ծանոթացնում է դասի կառուցվածքին:

Աշակերտներին ակտիվացնելուց հետո հնչում է հարց.

- ✔ Ո՞վ է կատարել տնային առաջադրանքները:
- ✔ Ի՞նչ հարցեր են առաջացել:

Աշակերտները շահագրգռվածությամբ սկսում են վերհիշել նախորդ օրվա իրենց յուրացրած նյութը, մեկը մյուսին լրացնելով ներկայացնում են նախորդ դասին իրենց սովորածը և իրենց հետաքրքրասիրությունը լարում սպասվելիք նոր գիտելիքների և կարողությունների յուրացմանը:Քննարկվում են առաջացած հարցերը, տրվում են սպառիչ պատասխաններ:

Աշակերտներին հետաքրքիր է դառնում դասի սպասվելիք բացահայտումները: Ուսուցիչը սահուն կերպով ներկայացնում է նոր դասը, հաղորդում է հիմնական տեղեկատվությունը նոր դասի վերաբերյալ ,բերում օրինակներ, նոր տեղեկություններ հաղորդում Արամ Խաչատրյանի կյանքից Ինչ է <<ժամանակի մեքենան>>:

Եթե դուք ունենայիք <<ժամանակի մեքենա>>, ապա ուր կուղևորվեիք, ինչու :

Աշակերտները լսում են, ինֆորմացվում են, աշխատում են,պատասխանում են հարցերին, քննարկում են,արտահայտում են իրենց կարծիքը:

Կշռադատման փուլում ուսուցիչը հնարավորություն է տալիս աշակերտներին արժևորել,օգտագործել,կիրառել իրենց սովորածն ու յուրացրածը: Հնչում են հետևյալ հարցերը՝

1. Ո՞վ է Արամ Խաչատրյանը:
2. Հատվածում Խաչատրյանի կյանքի որ դրվագներն են ներկայացված:
3. Ինչ ես հասկանում՝ ասելով ,որ <<Արամ Խաչատրյանը մեծ հայրենասեր է>>:

5. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքը շատ հետաքրքիր ընթացք ունեցավ, աշակերտների մտքերը, գաղափարները երևացին յուրովի: Այսպիսի դասերը պետք են, սրանք նաև հուշում են ուսուցչին, թե որտեղ են թերանում աշակերտները: Դասերը շատ բովանդակալից էին,այն աշակերտները, որոնք պասիվ էին հիմնականում, կարողացան մասնակցել դասերին լիարժեք, նրանք ազատ արտահայտում էին իրենց դիրքորոշումը, կարծիքը: Կան աշակերտներ, որոնց ունակությունները մինչև վերջ էլ չեն բացահայտվում և զանազան մեթոդների կիրառումը ցույց է տալիս դրանց արդյունավետության աստիճանը: Դասարանում ունեցանք որոշակի առաջընթաց,Ուսումնական ռազմավարությունները օգտագործվեցին արդյունավետ, միահյուսվելով ազգային արժեհամակարգին, ստացանք մտածող, տրամաբանող, վերլուծող և կարծիք արտահայտող աշակերտ, որը պատրաստ կլինի ապագայում նույնպես հստակ արտահայտվելու և իր դիրքորոշումը հայտնելու:

21- րդ դարի աշակերտը սեփական փորձով պետք է հասկանա, կարողանա քննարկել նյութի բովանդակությունը, նշել պատճառներն ու հետևանքները: Հասկանա՝ ինչպես է կարևորվում իրադարձությունը եւ ինչ հարցեր են ծնվում նյութը ուսումնասիրելիս:

6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հանրակրթության պետական չափորոշիչ: Հավելված N2 ՀՀ Կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-Ն որոշման

2. Անահիտ Մեհեմշյան, Զարուհի Սարգսյան, Վարդուհի Ստեփանյան Հայ դեռահասի արժեհամակարգի փոխակերպումները էլեկտրոնային լրատվամիջոցների ազդեցությամբ (ուսումնաօժանդակ ձեռնարկ). – Եր ԵՊՀ հրատ., 2013թ.:

3. https://hy.wikipedia.org/wiki/ Դիրքորոշում

4. Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Հանրային կառավարում, «Պետական ծառայություն» Երևան, 2/2017:

5.Մայրենի 4, մաս 1, Երևան 2022թ.:

7. ՀԱՎԵԼՎԱԾ

7.1 ԴԱՍԱՊԼԱՆ__**1**

ՈՒՍՈՒՑԻՉ՝ՌԻՄԱ ԹԱՌՈՅԱՆ

Առարկա	Մայրենի	Ամսաթիվ **09.10.2023թ.**	**4**ա	**1**-ին կիսամյակ
ԹԵՄԱ՝	<<Հովհաննես Թումանյանի արձանի մոտ>>			
Օգտագործվող նյութեր՝	դասագիրք, տետրեր,պաստառ, մարկերներ, գունավոր գրիչներ, այլ իրեր			
Դասի նպատակը՝	• սահուն կարդալ դասը • գնահատել Հովհաննես Թումանյանի մեծությունը • նպաստել սովորողների արժեհամակարգի ձևավորմանը Հովհաննես Թումանյանի կերպարի և հերոսների միջոցով			
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա՝ • սահուն կարդալ դասը • արժևորել Հովհաննես Թումանյանի մեծությունը • գիտակցել մայրենիի՝ որպես ազգային մշակույթի կարևորագույն արժեքի բացահայտողի դերը			

Գործողություններ /ժամ/տևողություն/	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հարցադրումներ
Մուտք-2րոպե Սկիզբ -3րոպե	 Ծանոթանում են դասի թեմային և նպատակներին	Ողջույն Ներկա-բացակա Ներկայացնում է դասի թեման և նպատակները	
Ընթացք-30-35րոպե	Բացում են տնային աշխատանքի տետրերը , ուսուցչի հարցերի միջոցով ստուգում այն Սկսում են վերհիշելնախորդ օրվա իրենց յուրացրած նյութը Սկսում են մաս-մաս կարդալ դասը	Ստուգում է տնային աշխատանքները Աշակերտներին կարճ հարցեր է տալիս նախորդ նյութի վերաբերյալ Լսում է աշակերտներին,ովքեր	Ով է կատարել տնային առաջադրանքը: Ինչ հարցեր են առաջացել: Տեսնենք՝ով կհիշի և կներկայացնի, թե ինչ ենք սովորել անցած դասին և որն է մեր այսօրվա դասը:

	Մասնակցում են քննարկմանը Պաստառի վրա նրանցից յուրաքանչյուրը նկարում է իր սիրելի թումանյանական հերոսը Ներկայացնում են իրենց կատարած աշխատանքները և պատասխանում են ուսուցչի վերոհիշյալ հարցերին:	կարդում են դասը, ուղղումներ անում նրանց կարդալիս Կազմակերպում է քննարկում Թումանյանի հերոսների արարքների և գործողությունների շուրջ Հանձնարարում է ,որ աշակերտներից ամեն մեկը պաստառի վրա նկարի իր սիրելի թումանյանական հերոսը և բացատրի իր ընտրությունը Լսում է յուրաքանչյուր աշակերտի և դիտում նկարը Գնահատում է բոլորին	Ով է Հովհաննես Թումանյանը, ինչ գիտեք նրա մասին: Ինչ նոր բան սովորեցիր մեծն Թումանյանի մասին: Թումանյանի որ ստեղծագործություններն են ձեզ ծանոթ: Ինչ հեքիաթներ են ծնողներդ պատմել քեզ համար: Որն է դրանցից առավել տպավորվել քեզ մոտ և ինչ է սովորեցրել քեզ: Թումանյանի որ հերոսն է դուր գալիս և ինչու:Նկարիր պաստառին:
Ավարտ-5րոպե	Նշում և հետ են վերադարձնում թերթիկները	Ամփոփում է դասը աշակերտների օգնությամբ, հարցնում է, թե ինչ նոր բան սովորեցին այսօր: Բաժանում է թերթիկներ,որի վրա աշակերտները գրում են,ե ինչն իրենց համար անհասկանալի թվաց: Հանձնարարում է հաջորդ	Ինչ նոր բան սովորեցիք այսօր: Ինչն էր ձեզ համար անհասկանալի, գրեք թերթիկների վրա:

		դասը՝ <<Արամ Խաչատրյանի հետ>>:	

7.2 ԴԱՍԱՊԼԱՆ__**2**

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՌԻՄԱ ԹԱՌՈՅԱՆ

Առարկա	Մայրենի	Ամսաթիվ **10.10.2023թ.**	**4**ա	**1**-ին կիսամյակ
Թեմա՝	<<Արամ Խաչատրյանի հետ>>			
Օգտագործվող նյութեր՝	դասագիրք, տետր,գունավոր գրիչներ, գրատախտակ			
Դասի նպատակը՝	• սահուն կարդալ դասը • ճանաչել ու գնահատել Արամ Խաչատրյանին • դաստիարակվել Արամ Խաչատրյանի ոգով			
Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա՝ • սահուն կարդալ դասը • արժևորել Արամ Խաչատրյանին • հասկանալ ու ըմբռնել նրա գործի կարևորությունը			

Գործողություններ/ժամ/տևողություն/	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն ՈՒսուցիչ	Հարցադրումներ
Մուտք-2րոպե		Ողջունում է դասարանին	

Սկիզբ-3րոպե	Վերհիշում են նախորդ դասի թեման	Ներկա-բացակա է անում	Որն է անցած դասի թեման: Անհասկանալի որևէ բան կա դասի վերաբերյալ:
Ընթացք 30-35 րոպե	Ուշադրությամբ լսում են ուսուցչին Սկսում են կարդալ դասը ուսուցչի ուղղորդմամբ Մեծ ոգևորությամբ մասնակցում են քննարկմանը Աշակերտները լսում են, քննարկում, պատասխանում են հարցերին Բոլորը մասնակցում են քննարկմանը, արտահայտում իրենց տեսակետերն ու կարծիքները	Ծանոթացնում է դասի թեմային,նպատակներին, ներկայացնում այսօրվա դասի անելիքները Լսում է աշակերտներին, հարկ եղած դեպքում ուղղում նրանց Կազմակերպում է քննարկում Արամ Խաչատրյանի կյանքի և գործի հետ կապված, հարցեր տալիս Նոր տեղեկություններ է հաղորդում Ա. Խաչատրյանի կյանքից Լսում է բոլորին ուշադրությամբ, վերջում արտահայտում նաև իր կարծիքը	Ով է Արամ Խաչատրյանը: Հատվածում Խաչատրյանի կյանքի որ հատվածներն են ներկայացված: Ինչ ես հասկանում՝ ասելով, որ <<Արամ Խաչատրյանը մեծ հայրենասեր է>>: Ինչ է <<ժամանակի մեքենան>>: Եթե դուք ունենայիք <<ժամանակի մեքենա>>,ապա ուր կուղևորվեիք, ինչու:

Ավարտ-5րոպե		Աշակերտների օգնությամբ ամփոփում է դասը: Հանձնարարում նոր դաս և տնային աշխատանք	Անհասկանալի որևէ բան կա դասի վերաբերյալ: